[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (արտադրանքների, ապրանքների առաքման)	[2] Սերիա	[3] Համար
23	Ապրիլ	2019 թ.		Բ	9532641870
[4] Առաքման ամսաթիվ					
23	Ապրիլ	2019 թ.		Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

	Պայմանագիր	
	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
	18 Հունվար, 2018 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Արտադրանք, ապրանք առաքող անձի										
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	6	9	0	2	0	8	7		
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	6	9	0	2	0	8	7	/	1

[10] Անվանումը	«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)	
[11] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ	N 1570015001210100
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57	
[13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57	
[14] Լրացուցիչ տվյալներ		

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի										
[15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3		
[16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										

[17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ	
[18] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխակատազմի գործառնական վարչություն	N 900011000834
[19] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5	
[20] Լրացուցիչ տվյալներ		
[21] Ում միջոցով	Անուն, ազգանուն	
	Լիազորագիր — Համար	
	Լիազորագիր — Ամսաթիվ	
[22] Մատակարարման (առաքման) եղանակը		
[23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5	

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	Այդ թվում՝ բնապահպանական հարկի գումար	Այդ թվում՝ ակցիզ. հարկի գումար
1	2	3	4	5	6	7	8	9
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 28158418 բ/գ,	հատ	2	39400		78800		
Ընդամենը						78800		

Առաքող՝ KALANTARYAN GAYANE 7203510093
(անունը, ազգանունը)

Ստացող
(անունը, ազգանունը)

23/04/2019 16:23:02

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

« 14 » փետրվարի 2019թ. քաղ.Արթիկ

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ, առաջին դասի խորհրդական՝ Ն.Ս.Մանանդյանս, քննարկելով թիվ 28158418 քրեական գործի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018 թվականի հոկտեմբերի 12-ին ժամը 13:40-ին Շիրակի մարզի Փոքր Մանթաշ գյուղի 9-րդ փողոցի 4-րդ տան բնակիչ Ահարոն Շավարշի Մխիթարյանը ոստիկանության Արթիկի բաժնում հաղորդում է տվել, որ նույն օրը ժամը 10:00-ի սահմաններում եղբայրը՝ Մխիթար Շավարշի Մխիթարյանը վիճաբանել է իր և եղբոր՝ Սուրեն Շավարշի Մխիթարյանի հետ, ծեծի ենթարկել իրենց՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Ահարոն Մխիթարյանը բացատրություն է տվել, որ 2018 թվականի հոկտեմբերի 12-ին ժամը 10:00-ի սահմաններում իր հողամասում կատարել է աշխատանքներ, այդ ժամանակ տեսել է, որ եղբայրը՝ Մխիթար Մխիթարյանը, հանել է իրենց հողամասերի սահմանին դրված, որպես նշան հանդիսացող քարերը: Ինքը մոտեցել է եղբորը, հարցրել, թե ինչի համար է քարերը հանել, որի պատճառով եղբայրը վիճաբանել է իր հետ, ձեռքերով հարվածներ հասցրել իր մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ: Դրանից հետո իրենց տուն է գնացել ավագ եղբայրը՝ Սուրեն Մխիթարյանը, ով նախատել է Մխիթար Մխիթարյանին, որի ընթացքում վերջինս ծեծի է ենթարկել նաև Սուրեն Մխիթարյանին, փորձել է բահով հարվածել նրան, սակայն բահի հարվածը դիպչել է կնոջը՝ Ժենյա Կեզացյանին: Այդ ընթացքում ինքը որևէ մեկին չի հարվածել:

Ըստ էության նույնաբովանդակ բացատրություն է տվել նաև Ռիփսիկ Խաչիկի Իսրայելյանը:

Սուրեն Մխիթարյանը բացատրություն է տվել, որ 2018 թվականի հոկտեմբերի 12-ին ժամը 11:00-ի սահմաններում իրեն պատկանող հողամասում կատարել է աշխատանքներ: Այդ ժամանակ կինը գնացել է հողամաս, հայտնել է, որ եղբայրը՝ Ահարոն Մխիթարյանը գնացել է իրենց տուն և հայտնել, որ Մխիթար Մխիթարյանը վիճաբանել է իր հետ ծեծի ենթարկել իրեն: Դրանից հետո ինքը գնացել է Ահարոն Մխիթարյանի տուն, իմացել, որ վիճաբանության պատճառը հանդիսացել է Մխիթար Մխիթարյանի կողմից հողամասի սահմանին որպես նշան դրված քարերը հանելը: Այդ ժամանակ ինքը նախատել է Մխիթար Մխիթարյանին, որի ընթացքում վերջինս բահով հարվածել է իր գլխին՝ մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ: Վիճաբանության ժամանակ ինքը որևէ մեկին չի հարվածել:

Մխիթար Մխիթարյանը բացատրություն է տվել, որ 2018 թվականի հոկտեմբերի 12-ին ժամը 10:00-ի սահմաններում հերկել է իրեն հողամասը: Տրակտորի դուրս գալու համար ինքը հանել է իրեն և եղբորը՝ Ահարոն Մխիթարյանին պատկանող հողամասերի սահմանին դրված քարերը: Այդ ժամանակ վերջինս վիճաբանել է իր հետ, որի ընթացքում իրենք փոխադարձ հարվածներ են հասցրել միմյանց, որից ինքը ստացել է ֆիզիկական ցավ: Դրանից հետո այդտեղ է գնացել ավագ եղբայրը՝ Սուրեն Մխիթարյանը, վիճաբանել է իր հետ, ինքը մեկ անգամ հարվածել է վերջինիս գլխին, իսկ Սուրեն Մխիթարյանը հարվածներ է հասցրել իրեն՝ պատճառելով ֆիզիկական ցավ: Այդ ժամանակ Սուրեն Մխիթարյանը փորձել է բահով հարվածել իրեն, բահով հարվածել է նաև կնոջը՝ Ժենյա Կեզացյանի դեմքին՝ պատճառելով մարմնական վնասվածք:

Ժենյա Կեզացյանը բացատրություն և հաղորդում է տվել, որ 2018 թվականի հոկտեմբերի 12-ին ժամը 10:00-ի սահմաններում իրենց հողամասը հերկելու համար ամուսինը՝ Մխիթար Մխիթարյանը, իրենց և Ահարոն Մխիթարյանի հողամասերի սահմանին դրված քարերը հանել է, որի պատճառով վերջինս վիճաբանել է ամուսնու հետ, ձեռքերով փոխադարձ հարվածներ հասցրել միմյանց: Նույն օրը ժամը 11:00-ի սահմաններում իրենց մոտ է գնացել Սուրեն Մխիթարյանը, սեռական բնույթի հայհոյանքներ է կատարել իրենց ընտանիքի անդամների հասցեին, որի ընթացքում վերջինս բակով հարվածներ է հասցրել իր մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ, իսկ ինքը ծեծի է ենթարկել Սուրեն Մխիթարյանին:

Համաձայն դատաբժշկական փորձաքննության թիվ 1350 եզրակացության Ահարոն Մխիթարյանի ստացած մարմնական վնասվածքները՝ քթի շրջանի քերծվածքների ձևով, հասցվել է բութ առարկայով, հնարավոր է որոշմամբ նշված ժամկետում, հանգամանքներում, առնվազն մեկ ներգործության հետևանք է և առողջությանը թեթև վնասի հատկանիշներ չի պարունակում:

Համաձայն դատաբժշկական փորձաքննության թիվ 1348 եզրակացության Ժենյա Կեզացյանի ստացած մարմնական վնասվածքները՝ ձախ բազկի շրջանի արյունազեղման ձևով հասցվել է բութ առարկայով, հնարավոր է որոշմամբ նշված ժամկետում, հանգամանքներում, առնվազն մեկ ներգործության հետևանք է և առողջությանը թեթև վնասի հատկանիշներ չիպարունակում:

Համաձայն դատաբժշկական փորձաքննության թիվ 1349 եզրակացության Ռիփսիկ Իսրայելյանի ստացած մարմնական վնասվածքները՝ աջ դաստակի 3-րդ մատի շրջանի քերծվածքի ձևով, հասցվել է բութ առարկայով, հնարավոր է փորձաքննության պահին փորձաքննության ենթարկվողի կողմից նշված ժամկետուն, հանգամանքներում, առնվազն մեկ ներգործության հետևանք է և առողջությանը թեթև վնասի հատկանիշներ չի պարունակում:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Սուրեն և Մխիթար Մխիթարյանները հրաժարվել են ներկայանալ դատաբժշկական փորձաքննության:

Կատարված ստուգումներով պարզվել է, որ Մխիթար Մխիթարյանը 13.03.2006 թվականից անցնում է <<Արթիկ բժշկական կենտրոն>> ՓԲ ընկերության նարկոլոգիական և հոգեբուժական կաբինետի հաշվառումներով՝ <<հետադարձ ընկճվածության խանգարում, ծանր աստիճան հոգեկան խանգարման ախտանիշներով>>, իսկ Ահարոն Մխիթարյանը 2006 թվականից անցնում է <<Արթիկ բժշկական կենտրոն>> ՓԲ ընկերության նարկոլոգիական և հոգեբուժական կաբինետի հաշվառումներով՝ <<Շիզոֆրենիա, պարանոիդ ձև, ցնորա-զառանցանքային սինդրոմ>> ախտորոշմամբ:

Հիշյալ հանգամանքի վերաբերյալ դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը իր ՎԲ-73/08 նախադեպային որոշմամբ՝ /..... Երբ անձը, ում իրավունքները խախտվել են, իր անօգնական վիճակի կամ այլ օբյեկտիվ պատճառներով չի կարող պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը, վճռաբեկ դատարանը գտնել է, որ նման իրավիճակում քրեական գործ հարուցելու առիթն օրինական, իսկ հիմքերը բավարար լինելու դեպքում քրեական գործ հարուցելու մասին որոշում պետք է կայացվի հանրային մեղադրանքի գործերի հարուցման համար սահմանված ընդհանուր կարգով:

Դեպքի առթիվ 2018 թվականի հոկտեմբերի 22-ին ոստիկանության Արթիկի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով հարուցվել է թիվ 28158418 քրեական գործը, որը նախաքննություն կատարելու նպատակով ուղարկվել է Շիրակի մարզային քննչական վարչություն, կատարվում է նախաքննություն:

Ահարոն և Մխիթար Մխիթարյաններին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանրության համար վտանգավոր արարքը մեղավորությամբ կատարելու համար, վերջիններիս նկատմամբ նշանակվել է դատահոգեբուժական փորձաքննություններ:

Նկատի ունենալով, որ քրեական գործով մի շարք հարցերի պարզաբանման համար պահանջվում են դատահոգեբուժական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-րդ, 244-րդ, 248-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. 28158418 քրեական գործով նշանակել դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետին, նրան նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

2. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ մեղադրյալ Մխիթար Մխիթարյանը նախկինում և հանրորեն վտանգավոր արարքը կատարելու պահին հոգեկան հիվանդությամբ տառապե՞լ է, թե՞ ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞ հիվանդությամբ է տառապել և ե՞րբվանից,

բ/ եթե Մխիթար Մխիթարյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկե՞լ է արդյոք նրան իր գործողություններին հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից:

գ/ մեղադրյալ Մխիթար Մխիթարյանը ներկայումս տառապու՞մ է որևէ հոգեկան հիվանդությամբ, եթե այո, ապա ինչպիսի՞,

դ/ եթե մեղադրյալ Մխիթար Մխիթարյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկու՞մ է նրան ներկայումս իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից,

ե/ մեղադրյալ Մխիթար Մխիթարյանը մեղսունա՞կ է, սահմանափակ մեղսունակ, թե՞ անմեղսունակ,

զ/ մեղադրյալ Մխիթար Մխիթարյանը հանրության համար վտանգ ներկայացնում է, թե ոչ, հարկադիր բուժման կարիք ունի՞, թե՞ ոչ, եթե այո, ապա ի՞նչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում և հակացուցված չէ՞ արդյոք բուժումը:

3. Եթե փորձաքննության ընթացքում առաջանան հարցեր, որոնք կարող են օգտակար լինեն քննության համար և որոնց պատասխանները մտնում են փորձագետի իրավասության մեջ, խնդրվում է պատասխանել նաև այդ հարցերին:

Թիվ 28158418 քրեական գործի նյութերը փորձագետին կտրամադրվի լրացուցիչ:

Ավագ քննիչ՝ **Ա.Ս.Մանանդյան**